Քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարական դիմադրողականությունը Հայաստանում

Ժողովրդավարական դիմադրողականության ամրապնդում 2026 թվականի հունիսի ընտրություններին ընդառաջ

Արթուր Պապյան, սպառնալիքների հետազոտող՝ CyberHUB նախագծում, Media Diversity Institute-ում

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալ հիմնադրամի Տրանսատլանտյան հիմնադրամի (GMF TF) ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն հեղինակ(ներ)ը և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական միության և/կամ GMF TF-ի տեսակետները

Այս ամփոփագիրը հասցեագրված է.

- Հայաստանի կառավարությանը և քաղաքականություն մշակողներին
- Եվրոպական Միության քաղաքականության մշակողներին և ինստիտուտներին
- Հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպություններին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը գտնվում է պատմական աշխարհաքաղաքական խաչմերուկում: 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղից մոտ 120,000 էթնիկ հայերի բռնի տեղահանումն արագացրեց հիմնարար ռազմավարական վերակողմնորոշումը. Ազգային ժողովը 2025 թվականի սկզբին օրենք ընդունեց ԵՄ անդամակցության գործընթացի մեկնարկի մասին, 2025 թվականի դեկտեմբերին ընդունեց ԵՄ- Հայաստան ռազմավարական օրակարգը և փաստացի կասեցրեց իր անդամակցությունը ՀԱՊԿ-ին: 2025 թվականի օգոստոսի Վաշինգտոնյան հռչակագրով նախաստորագրվեց Ադրբեջանի հետ խաղաղության շրջանակային համաձայնագիրը՝ նվազեցնելով ռազմական էսկալացիայի վերսկսման ռիսկը, սակայն միաժամանակ ակտիվացնելով հիբրիդային գործողությունները, որոնք թիրախավորում են Հայաստանի ժողովրդավարական ինստիտուտները և 2026 թվականի հունիսին կայանալիք խորհրդարանական ընտրությունները:

Դիմադրողականության և խոցելիության միջև հավասարակշռությունը ավելի լավ ներկայացնելու համար ստորև ներկայացված աղյուսակը ընդգծում է հիմնական կառուցվածքային գործոնները, որոնք ձևավորում են Հայաստանի ժողովրդավարական զարգացման ընթացքը:

ԱՂՅՈՒՍԱԿ. Ժողովրդավարական դիմադրողականության և խոցելիության գործոնները Հայաստանում

ՉԱՓՈՐՈՇԻՉ	Դրական տարրեր (դիմադրողականություն)	Խոցելիություններ / ռիսկեր
Աշխարհաքաղաքական	ԵՄ անդամակցության գործընթացի մեկնարկ (2025)	Արտաքին հիբրիդային ճնշումներ
Անվտանգություն	Վաշինգտոնյան հռչակագիրը նվազեցնում է ռազմական ռիսկը	Արտաքին ընտրական միջամտություն
Ինստիտուցիոնալ	ԵՄ–Հայաստան ռազմավարական օրակարգ	Ինստիտուտները ենթակա են մանիպուլյացիայի
Ընտրական	Մրցակցային ընտրություններ (2026)	Վաղաժամ ապատեղեկատվական արշավներ (14 ամիս)
Քաղաքացիական հասարակություն	Դիմադրողականության մեջ առանցքային դեր	Թուլացում՝ ԱՄՆ աջակցության դադարեցումից հետո

Աղբյուր՝ հեղինակ

2026 թվականի հունիսյան ընտրությունները ռազմավարական ջրբաժան են. դրանք ըստ էության համազգային հանրաքվե են Հայաստանի եվրոպական ուղու վերաբերյալ: Հայաստանի Արտաքին հետախուզության ծառայությունը (ԱՀԾ) գնահատել է, որ արտաքին միջամտությունը կլինի «համապարփակ, բարդ և լայնածավալ»: Ռուսաստանի ապատեղեկատվական արշավը սկսվել է ընտրությունների օրվանից 14 ամիս առաջ՝ ավելի վաղ, քան Գերմանիայի (3 ամիս) կամ

Մոլդովայի (5 ամիս) դեմ իրականացված նմանատիպ ջանքերը: Միևնույն ժամանակ, 2025 թվականին ԱՄՆ արտաքին օգնության հանկարծակի դադարեցումը կործանարար հարված է հասցրել քաղաքացիական հասարակությանը և մեդիա էկոհամակարգին, որոնք ծառայում են որպես ժողովրդավարական դիմակայունության հիմնական ենթակառուցվածք

Այս զարգացումները ավելի լայն ժամանակային շրջանակում ներկայացնելու համար ստորև ներկայացված ժամանակագիծը ընդգծում է Հայաստանի ռազմավարական վերակողմնորոշման հիմնական հանգրվանները

Ժամանակագիծ. Հայաստանի ռազմավարական վերակողմնորոշումը *(2023–2026)*



Աղբյուր՝ հեղինակ

Այս ամփոփագիրը համադրում է երկրի մակարդակով իրականացված կառուցվածքային հետազոտության արդյունքները, որոնք ընդգրկում են չորս վերլուծական խմբեր՝ ինստիտուցիոնալ և կառավարման հիմքեր, արձագանք հիբրիդային սպառնալիքներին, քաղաքացիական հասարակության կարողություններ ու բարեփոխումների կայունություն և բարեփոխումների արտաքին գործոններ: Այն ներկայացնում է հետազոտությունից բխող եզրակացություններ և նպատակային հանձնարարականներ երեք լսարանների համար, որոնք ունեն տարբերվող, բայց փոխլրացնող դերակատարում Հայաստանի ժողովրդավարական անցմանն աջակցելու գործում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացվում են օրենսդրական բարեփոխումներ, բայց կիրարկումը կաղում է

Հայաստանի 2025 թվականի կառավարման բարեփոխումների փուլը՝ «Կիբեռանվտանգության մասին» օրենքը, «Հանրային տեղեկությունների մասին» օրենքը, կիբեռանվտանգության ոլորտը կարգավորող Ինքնավար մարմնի ստեղծումը և Ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարության ընդունումը և 2024–2026 թթ. գործողությունների ծրագիրը, զգալի առաջընթաց են 2018 թվականի ժողովրդավարական անցումից ի վեր: ՀՀ-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգը (դեկտեմբեր 2025 թ.) և Վիզաների

ազատականացման գործողությունների ծրագիրը (նոյեմբեր 2025 թ.) ապահովում են կառուցվածքային համապատասխանեցման խթաններ: Այնուամենայնիվ, օրենսդրության ընդունման և գործառնական կարողությունների միջև մեծ բաց կա. կիբեռանվտանգության վերահսկողության ինքնավար մարմինն ընտրական փուլի մեկնարկին դեռևս ամբողջությամբ չի գործում, հանրությունը չի վստահում դատական և օրինաստեղծ համակարգերին, իսկ հակակոռուպցիոն հանձնառությունների կատարումը կրում է ընտրովի և անհետևողական բնույթ:

Հիբրիդային սպառնալիքները աննախադեպ մասշտաբի և բարդության են հասնում

ԱՀԾ-ն (2026 թ.) նույնականացնում է հիբրիդային գործունեության հինգ կատեգորիա՝ կիբեռգործողություններ ուղղված կրիտիկական ենթակառուցվածքների և ընտրությունների դեմ, արհեստական բանականության (ԱԲ) կիրառմամբ տեղեկատվական արշավներ, գործակալների ակտիվացում և քաղտեխնոլոգիաների կիրառում, տնտեսական հարկադրանք և թիրախային վարկաբեկման արշավներ: NewsGuard-ը (2025 թ.) արձանագրել է 18 հատուկ ռուսական կեղծ թեզեր, որոնք ապահովել են 45 միլիոն դիտում 11 հարթակներում և 8 լեզուներով՝ վերագրվելով Storm-1516-ին և Պրիգոժինի հետ կապված կառույցներին: «Մատրյոշկա» ԱԲ բոտերի ցանցը կիրառել է դիփֆեյքեր՝ կեղծելով միջազգային լրատվամիջոցները, մինչդեռ միջուկային թափոնների մասին բազմալեզու կեղծիքը. տարածվել է հիմնական ԱԲ չաթ-բոտերի միջոցով: Հատկանշական է, որ ներկայիս ինստիտուցիոնալ արձագանքը մնում է գերազանցապես հակազդող (reactive). չկա Գործառնական ընդհանուր պատկերի (COP) որևէ շրջանակ, որը կհամակարգի կիբեռ և տեղեկատվական սպառնալիքների հետախուզությունը տարբեր գերատեսչությունների միջև:

Քաղաքացիական հասարակությունը գտնվում է լուրջ ռեսուրսների ճնշման տակ

ԱՄՆ արտաքին օգնության հանկարծակի դադարեցումը 2025 թվականին աղետալի էր Հայաստանի քաղաքացիական հասարակության էկոհամակարգի համար. հայկական ՔՀԿ-ների մոտ 40%-ը իրենց բյուջեի զգալի մասի համար ապավինում էր USAID-ի դրամաշնորհներին: Ծրագրերի փակումը, անձնակազմի կրճատումները, փաստերի ստուգման և մեդիագրագիտության գործունեության կրճատումը անմիջականորեն թուլացրել են ժողովրդավարական դիմադրողականությունը ամենախոցելի պահին: ՔՀԿ չափիչի ընդհանուր 4.8/7 միավորը քողարկում է զգալի կառուցվածքային խնդիրներ. Պետություն-ՔՀԿ համագործակցությունը ստացել է ամենացածր միավորը՝ 4.0/7, ինչը արտացոլում է ՔՀԿ ազգային քաղաքականության բացակայությունը, մասնավոր նվիրատվությունների համար հարկային խթանների բացակայությունը և դրամաշնորհների եկամուտների վրա կիրառվող ԱԱՀ-ն: Խոսքի ազատությունը 4.9-ից նվազել է մինչև 4.7՝ SLAPP սպառնալիքների աճի և լրագրողների դեմ զրպարտչական արշավների պատճառով:

ԵՄ ինտեգրման հանրային աջակցությունը կարևորագույն ժողովրդավարական խարիսխ է

Հայաստանցիների 72%-ը կողմ է ԵՄ անդամակցությանը (IRI, փետրվար 2026թ.). 51%-ը կքվեարկեր միանալու օգտին հանրաքվեի միջոցով: Այս լայն հանրային մանդատը, որը սկսվել է քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության միջոցով, այլ ոչ թե քաղաքական ղեկավարության միանձնյա որոշմամբ, ներկայացնում է բարեփոխումների օրակարգի ամուր հիմք: Այնուամենայնիվ, հարցվածների 48%-ը չի վստահում որևէ քաղաքական գործչի (IRI, փետրվար 2026թ.), և միայն 32%-ն է վստահություն հայտնում Ազգային ժողովի նկատմամբ: Այս վստահության դեֆիցիտը ստեղծում է խոցելիություն. ապատեղեկատվության գործիչները ակտիվորեն շահագործում են ինստիտուցիոնալ անվստահությունը՝ եվրոպամետ կառավարությանը և անդամակցության գործընթացը ապալեգիտիմացնելու համար:

Խաղաղության գործընթացը ստեղծում է նոր հիբրիդային սպառնալիքի դինամիկա

Վաշինգտոնի հռչակագրով Ադրբեջանի հետ հարաբերությունների մասնակի կարգավորումը նվազեցրել է ավանդական ռազմական ռիսկը, բայց ակտիվացրել է ազդեցության գործողությունները: ԱՀԾ-ն նշում է «արևմտյան Ադրբեջանի» պատմությունների 36%-ով աճ 2025 թվականի օգոստոսի համաձայնագրից հետո: Ադրբեջանի 2026 թվականի ռազմական բյուջեն հասել է 9 միլիարդ մանաթի՝ պահպանելով կառուցվածքային ասիմետրիան: Կրեմլամետ գործիչները, այդ թվում՝ «Եվրասիա» ՀԿ-ն, որը մոլդովական Շոր ցանցի փորձով՝ կիրառում է բարեգործական միջոցներով մանիպուլյացման մարտավարություն, օգտագործում են ներքաղաքական լարվածությունը (մասնավորապես՝ 2025 թվականի մայիս-հունիս ամիսների կառավարություն-Հայ առաքելական եկեղեցի հակամարտությունը)՝ եվրոպական, եվրոպամետ նարատիվներին հակադրվելու համար:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Հայաստանի կառավարության և քաղաքականություն մշակողների համար

- Լիարժեք գործարկել Ռազմավարական հաղորդակցության վարչությունը որպես կառավարության առանցքային գործառույթ: Ստեղծել Ընդհանուր գործառնական պատկերի (COP) շրջանակ, որը կմիավորի Ազգային անվտանգության ծառայության կիբեռհետախուզությունը, ԱՀԾ սպառնալիքների գնահատումները և քաղաքացիական հասարակության փաստերի ստուգումը իրական ժամանակում նախընտրական համակարգման մեխանիզմի մեջ՝ ոչ ուշ, քան 2026 թվականի հունիսյան ընտրություններից 60 օր առաջ:
- Արագացնել դատական անկախության բարեփոխումները: Դատական համակարգի և խորհրդարանի նկատմամբ վստահության ցածր աստիճանները ոչ միայն ժողովրդավարական ձախողումներ են, այլև հիբրիդային հարձակումներ իրականացնողների համար հեշտությամբ թիրախավորվող ուղղություններ:
- Ստեղծել ՔՀԿ-ների կայունությունն ապահովելու ճանապարհային քարտեզ՝ արձագանքելով ԱՄՆ ՄԶԳ-ի դուրսբերմանը: Սա պետք է ներառի հարկային խթաններ՝ ՔՀԿ-ներին անհատական և կորպորատիվ նվիրատվություններ փոխանցողների համար, դրամաշնորհային եկամուտներից ԱԱՀ-ի վերացում և սոցիալական ձեռնարկատիրության համար հարմար իրավական շրջանակ:

Եվրոպական Միության քաղաքականության մշակողների համար

- Քաղաքացիական հասարակությունը պաշտոնապես ներառել որպես ԵՄ անդամակցության բարեփոխումների չափանիշերի անկախ մոնիտորներ 2025 թվականի դեկտեմբերի ռազմավարական օրակարգի շրջանակներում՝ ոչ թե որպես խորհրդատուներ, այլ որպես ինստիտուցիոնալացված մասնակիցներ, որոնք հասանելիություն ունեն գործընթացի իրականացման մասին տվյալներին և տեղեկատվությանը:
- Արագացնել վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը՝ որպես ժողովրդավարական խթան: Վիզայի ազատականացումը այս փուլում ԵՄ-ի կողմից Հայաստանի քաղաքացիների համար ամենաշոշափելի ակնկալիքն է: Մինչև 2026 թվականի հունիսը տեսանելի առաջընթացը կամրապնդի եվրոպամետ հանրային մանդատը հիբրիդային ապալեգիտիմացման դեմ:

- Միավորվեք ֆինանսական կայունության օրակարգի շուրջ: USAID-ի ֆինանսավորման ճգնաժամը պահանջում է կոլեկտիվ գործողություններ. համատեղ դրամաշնորհային հայտեր, վարչական ռեսուրսների միավորում և միացյալ օգտագործում, դոնորների հետ համակարգված դրամահավաքային մոտեցումներ, որոնք հատկապես կարևոր են ընտրություններից հետո սպասվող ֆինանսական վակուումի և կազմակերպությունների փակումը կանխելու համար:
- Ստեղծել քաղաքացիական հասարակության մոնիթորինգի կոալիցիա՝ ԵՄ անդամակցության բարեփոխումների չափանիշների համար, որը եռամսյակային և տարեկան հաշվետվություններ կհրապարակի Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի և ռազմավարական օրակարգի շրջանակներում իրականացման առաջընթացի վերաբերյալ՝ ստեղծելով հաշվետվողականության ճնշում և տրամադրելով հավաստի ապացույցներ ԵՄ ինտեգրումը ձևական և կոսմետիկ ներկայացնող ապատեղեկատվական պնդումների դեմ:
- Ստեղծել իրական ժամանակում տեխնիկական սպառնալիքների փոխանակման կարողություններ մոլդովական և ուկրաինական քաղաքացիական հասարակության գործընկերների հետ: Հայկական, մոլդովական և ուկրաինական կազմակերպությունները բախվում են ընդհանուր սպառնալիքի գործիչների (UNC5792, UNC3890, Storm-1516): Տեխնիկական ցուցանիշների փոխանակման մեխանիզմը կապահովի վաղ նախազգուշացում և համատեղ վերլուծական կարողություններ:
- Մշակել միասնական կոալիցիա՝ SLAPP սպառնալիքներին դիմակայելու և քաղաքացիական տարածքը պաշտպանելու համար: Խոսքի ազատության անկումը և լրագրողների դեմ զրպարտչական արշավների աճը վկայում են ինքնագրաքննության համակարգված ջանքերի մասին: Համատեղ իրավական պաշտպանության հիմնադրամը և արագ արձագանքման հաղորդակցության արձանագրությունը կկանխեն սրացումը:

BIBLIOGRAPHY

1. ARLIS. 2018. Arlis.am. 2018. https://www.arlis.am/hy/acts/218672.
2. ARLIS. 2018. Arlis.am. 2018. https://www.arlis.am/hy/acts/218678.
3. ARLIS. 2018. Arlis.am. 2018. https://www.arlis.am/hy/acts/187979.
4. Armenia–EU Partnership Strategic Agenda." 2025. Www.mfa.am. 2025. https://www.mfa.am/en/press-releases/2025/12/03/Armenia_EU_StrategicAgenda/13649.
5. Հայաստան - ԵՄ վիզաների ազատականացման գործողությունների ծրագիր. հակիրճ նկարագրություն. 2025. Ministry of Internal Affairs of the Republic of Armenia. 2025. https://mia.gov.am/2025/11/06/em-33/.
6. Public Opinion Survey: Residents of Armenia. 2026. https://www.iri.org/wp-content/uploads/2026/03/ARM-26-NS-01-PT-FINAL_Public.pdf.
7. Corruption Perceptions Index (CPI) 2025." 2025. Transparency.am. 2025. https://transparency.am/en/cpi#:~:text=Results%20for%20Armenia%20and%20Other,sources%20used%20in%20its%20assessment..
8. Annual Report on External Security risks of the Republic of Armenia, 2026. https://armenpress.am/storage/content/2025/pdf/NewFolder/FISA_Annual_Report_2026_English.pdf
9. Russia Targets Armenia's Elections — Early and Viciously. 2025. NewsGuard. December 16, 2025. https://www.newsguardtech.com/special-reports/russia-targets-armenias-elections-early-and-viciously/
10. After USAID: Armenian Civil Society at a Crossroads. 2025. Caucasus Watch. August 14, 2025. https://caucasuswatch.de/en/insights/after-usaid-armenian-civil-society-at-a-crossroads.html.
11. CSO Meter. 2026. https://transparency.am/en/publication/pdf/420/12558
12. Public Opinion Survey: Residents of Armenia. 2026. https://www.iri.org/wp-content/uploads/2026/03/ARM-26-NS-01-PT-FINAL_Public.pdf.
13. Azerbaijan Plans Nearly AZN 9 Billion for Defense and National Security in 2026 Budget. 2026. Apa.az. 2026. https://en.apa.az/finance/azerbaijan-plans-nearly-azn-9-billion-for-defense-and-national-security-in-2026-budget-480996#:~:text=Out%20of%20the%204%2C656%2C698%2C016%20manats,Finance.